ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՎԻՃԱԿ

Գագիկ Հարությունյան

Մրցակցող հիմնական աշխարհաքաղաքական դերակատարների միջև ստեղծված դինամիկ հավասարակշռությունը կարելի է ներկայացնել որպես քվազիմիաբևեռից դեպի քվազիբազմաբևեռ աշխարհակարգի անցնելու փուլ: Նման իրավիճակում ճշգրիտ կանխատեսումները սկզբունքորեն դժվարացված են քաղաքական դաշտի գաղափարականացվածության հետևանքով: Այդ հանգամանքն առավել հստակ նկատվում է ԱՄՆ ռազմավարությունում, որի մեջ կիրառվող դասական աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դրույթներին ավելացել են նաև աշխարհագաղափարախոսական մոտեցումները: Գաղափարախոսական ձև և ավելի թույլ արտահայտված գաղափարական բովանդակություն ունեցող «հեղափոխական» տեխնոլոգիաներով նոր տարածքները վերահսկողության տակ դնելն ինչ-որ չափով հիշեցնում է ԽՍՀՄ «հեղափոխությունների արտահանման» և «սոցիալիզմի անաղարտ պահպանման» քաղաքականությունը: Նման գործառույթները ռազմավարական հեռանկարում վարկաբեկում են գաղափարախոսական դրույթները, հարուցում աշխարհաքաղաքական այլ դերակատարների դիմադրությունը և այլընտրանքային մոտեցումներ: Արդյունքում՝ ի հայտ են գալիս ներկա աշխարհակարգի վերաբերյալ իրենց ուրույն պատկերացումներով ուժի կենտրոններ: Որպես նման մի կենտրոն այսօր շատերի կողմից ընկալվում է Չինաստանը, որի գաղափարախոսական մոտեցումներն ավելի քան մրցունակ են: ՉԺՀ գործուն մասնակցությամբ ձևավորվել է նաև Շանհայի համագործակցության կազմակերպությունը: ՇՀԿ-ն զգալիորեն ակտիվացրել է իր գործունեությունը և կարողացել է արդյունավետ քաղաքականություն ցուցաբերել ուզբեկական «հեղափոխական» հայտնի զարգացումների պարագայում: Դա կարելի է ընկալել որպես իրատեսական մարտահրավեր՝ ուղղված ներկայիս քվազիմիաբևեռ աշխարհակարգի դեմ:

Ներածություն

Ժամանակակից քաղաքական գործընթացների մի զգալի մասը թելադրված կամ պայմանավորված է Միացյալ Նահանգների ունիլատերալ (միակողմանի) բնույթ կրող ռազմավարությամբ: Նման քաղաքականությունը հիմնավորվում է այն անվիճելի փաստարկով, որ ներկայումս գործում են ցանցային բնույթի և լայն հնարավորություններ ունեցող ահաբեկչական խմբեր, որոնք սպառնալիք են ներկայացնում ԱՄՆ-ի և ընդհանրապես քաղաքակիրթ աշխարհի անվտանգության համար: Միևնույն ժամանակ, նույնքան անվիճելի է այն հակաթեզը, համաձայն որի՝ ԱՄՆ-ը իր գլոբալ ռազմավարությունում գլխավորապես հետապնդում է սեփական շահերը, և պայքարն ահաբեկչության դեմ պատրվակ է աշխարհաքաղաքական նպատակներին հասնելու համար:

Ստեղծված իրավիճակը դրդում է աշխարհաքաղաքական մնացյալ դերակատարներին մշակել սեփական մոտեցումներ, որոնք ուղղված են ամերիկյան քաղաքականությունից բխող կորուստները նվազեցնելուն և գերտերության ճնշմանը դիմակայելուն: Զարգացումներն այդ ոլորտում վկայում են այն մասին, որ սառը պատերազմի երկբևեռությանը հաջորդած միաբևեռ աշխարհակարգը (իրողությանը, ըստ մեզ, ավելի համարժեք է *քվազիմիաբևեռ* եզրը) ենթարկվում է փոխակերպման՝ միտում ունենալով վերածվելու բազմաբևեռ կառուցվածքի: Ներկա փուլում մրցակցող ուժերի միջև, թերևս, ստեղծվել է դինամիկ հավասարակշռություն, որը ներկայացնում է միաբևեռ և բազմաբևեռ բազմաշերտ կառուցվածքների համակեցություն (սիմբիոզ): Այն կարելի է բնութագրել որպես *քվազիբազմաբևեռ:*

Պետք է, սակայն, ընդունել, որ դինամիկ հավասարակշռության վիճակը կարող է դեռ երկար գոյատևել: Հայտնի է նաև, որ անցումային վիճակում ապագայի վերաբերյալ միանշանակ կանխատեսումները, որպես կանոն, արդարացված չեն: Թերևս, սա է պատճառներից մեկը, որ զանազան հետազոտական կենտրոնների կամ փորձագետների կողմից առաջարկված ապագայի սցենարները (օրինակ՝ շատերի կողմից առանցքային համարվող 2020թ. վերաբերյալ) հաճախ սկզբունքորեն հակասում են միմյանց:

Ապագայի սցենարների բազմազանությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ հետազոտողները գլոբալ զարգացումներում հաշվի են առնում տնտեսական ցուցանիշների փոփոխությունները, սակայն հաճախ անտեսում են գաղափարախոսական և դրանով պայմանավորված հոգևոր գործոնները: Դա պայմանավորված է նրանով, որ իռացիոնալ բնույթի գործոնները դժվար է գնահատել և առավել ևս «տեղավորել» անգամ կարճաժամկետ զարգացումների բանաձևերում: Այս ամենի համատեքստում հրատապ նշանակություն է ստանում արդի թիվ 1 տերության՝ Միացյալ Նահանգների քաղաքականությունում գաղափարախոսական բաղադրամասի դերի գնահատման փորձը:

1. Աշխարհաքաղաքականությունից դեպի աշխարհագաղափարախոսություն

ԱՄՆ ժամանակակից քաղաքականության որոշ դրույթներ սկսել են զգալիորեն տարբերվել նախկինում ընդունված դասական կանոններից: Պատահական չէ, որ Զբիգնև Բժեզինսկին այսօր, փաստորեն, հանդես է գալիս որպես Ջ.Բուշի ռազմավարության քննադատ: Վաշինգտոնի ներկայիս քաղաքական գծի հետ հաճախ իրենց անհամաձայնությունն են հայտնում նաև Հենրի Քիսինջերը, Փոլ Քենեդին և այլոք:

Նման տարաձայնությունների հիմնական պատճառն այն է, որ «հին»

աշխարհաքաղաքական դպրոցի ներկայացուցիչները ներկայիս ամերիկյան ռազմավարությունը փորձում են մեկնաբանել ավանդական աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական եզրաբանությամբ, մինչդեռ ԱՄՆ արդի քաղաքականությունում առաջին պլան են մղվել գաղափարախոսական նկատառումները: Դա ամենևին չի նշանակում, թե ռեալ քաղաքականության՝ աշխարհագրական դիրքեր գրավելու կամ քաղաքական խնդիրները տնտեսական մեթոդներով լուծելու հարցերը կորցրել են հրատապությունը: Դա ընդամենը նշանակում է, որ վերոհիշյալ գործոններին զուգահեռ՝ ներկայումս առավելագույնս կարևորվում են գաղափարախոսական խնդիրները: Այլ խոսքերով՝ ***աշխարհագաղափարախոսությունը*** (այս եզրը գրականությունում կապվում է գերմանացի աշխարհաքաղաքագետ Կարլ Հաուսհոֆերի անվան հետ, սակայն այդ հասկացությունը մանրակրկիտ իմաստային վերլուծության չի ենթարկվել) աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության գաղափարականացման արգասիք է [1-3]: Բնորոշ է, որ Հենրի Քիսինջերն իր վերջին հոդվածներից մեկում մեկնաբանելով ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունը՝ նույնպես հանգում է այն մտքին, թե «պատերազմն Իրաքում նվազ չափով է կապված աշխարհաքաղաքականության հետ, այն ավելի շուտ հանդիսանում է գաղափարախոսությունների, մշակույթների և կրոնական հավատքի ընդհարում» [4]:

Վերոհիշյալի համատեքստում նպատակահարմար է ընդունել այն ձևակերպումը, համաձայն որի՝ «գաղափարախոսությունն անհրաժեշտ է դիտարկել որպես «նպատակների համակարգի «լեգիտիմացման» գործիք» [5]: Միացյալ Նահանգների գլոբալ ռազմավարությունում գաղափարախոսական դրույթները հանդիսանում են ելակետային հիմնավորում այս կամ այն նախաձեռնության համար (դա առավել հստակ արտահայտվում է մերձավորարևելյան քաղաքականությունում, որի գերակայող հիմնավորումներից է, օրինակ, ավտորիտարիզմի փոխարինումը ժողովրդավարականությամբ): Դրան զուգահեռ՝ գաղափարականացված մոտեցումները ծառայում են որպես հիմնավորում և գործիք, այսպես կոչված, «գունավոր հեղափոխություններ» իրագործելիս:

Նման իրադրությունը պայմանավորված է հիմնականում նրանով, որ Միացյալ Նահանգները վերջնականորեն ձևավորվել է, համաձայն Յուբեր Վեդրինի եզրաբանության, որպես գերկայսրություն: Եվ այդ երկրի քաղաքական ընտրանին (հատկապես այդ ընտրանու նեոկոնսերվատորական թևը) ըմբռնում է, որ առանց գլոբալ և միատարր գաղափարական դաշտի ստեղծման՝ անհնար է պատկերացնել իր գերակայությունն աշխարհում: Այս համատեքստում նկատենք, որ թեև գլոբալացումը համեմատաբար նոր եզր է (համարվում է, որ ներկայումս ընդունված բովանդակությամբ այն կիրառել է

Ջ.Մակլինը 1981թ.), սակայն նման գործընթացներ՝ այս կամ այն տեսքով, մշտապես տեղ են գտել մարդկության պատմության ընթացքում՝ արտահայտելով այս կամ այն կայսրության արժեհամակարգային նորմերի տարածումն աշխարհում: Դեռ ոչ վաղ անցյալում առկա էին գլոբալացման երկու վեկտոր. իրենց գաղափարական և տնտեսական արժեհամակարգերը փորձում էին աշխարհով մեկ ներդնել և՛ ԽՍՀՄ-ը, և՛ ԱՄՆ-ը: Վերջինիս հաղթանակը սառը պատերազմում, փաստորեն, նշանավորեց ազատականության հաղթանակը կոմունիստական աշխարհայացքի հանդեպ:

Բնորոշ է, որ համաձայն ամերիկյան դոկտրինալ դրույթների, այն երկրները կամ տարածաշրջանները, որոնք դուրս են ներկայիս գլոբալացման գործընթացներից, որակվում են որպես «չինտեգրված ճեղքվածքներ»: Դրանք, համաձայն Պենտագոնի փորձագետների, իրենց իսկ գոյությամբ վտանգ են ներկայացնում ԱՄՆ-ի համար: Այդ «չինտեգրված ճեղքվածքները» ենթակա են կոշտ եղանակներով կրճատման կամ վերացման [6]: Այդպիսով, համաձայն ամերիկյան տեսակետի՝ այսօր ուժային միջոցներով հնազանդեցման և հետագա վերահսկողության են ենթակա ողջ Աֆրիկան, Բալկանները, Կովկասը, Կենտրոնական Ասիայի, Մերձավոր և Միջին Արևելքի որոշ երկրները, Հյուս. Կորեան, Կուբան, որոնք չեն «ինտեգրվում» գլոբալ հանրությանը: Այդ տարածաշրջանների բնակչությունը (որի զգալի մասը մահմեդական է) գնահատվում է մոտ 2 մլրդ:

Ներկայումս փորձ է արվում մարմնավորել աշխարհագաղափարախոսական մոտեցումները իրական քաղաքականությունում: Սենատորներ Ջո Լիբերմանը և Ջոն Մաքեյնը Կոնգրեսին են ներկայացրել «Ժողովրդավարության առաջխաղացման մասին» օրենքի նախագիծը, համաձայն որի՝ եթե որևէ պետություն խախտում է ժողովրդավարության նորմերը, ապա դա վտանգում է ԱՄՆ ազգային անվտանգությունը: Հետևաբար, Միացյալ Նահանգները պարտավոր է այդ երկրներում վերականգնել ժողովրդավարությունը: Մասնավորապես, սենատոր Մաքեյնը նշում էր, որ «Ժողովրդավարությանն ու ազատությանն աջակցությունը չի կարելի անջատել ԱՄՆ ազգային անվտանգության խնդիրներից, և եթե Նյու Յորքի, Վաշինգտոնի կամ Կալիֆորնիայի անվտանգությունը գոնե մասնակիորեն կախված է էր Ռիյադի, Բաղդադի կամ Կահիրեի ազատությունից, մենք պարտավոր ենք աջակցել այնտեղ ժողովրդավարության հաստատմանը և հասարակության կատարելագործմանը: Դա պակաս կարևոր չէ, քան նոր ռազմական տեխնիկայի մշակումները»[1]: Հատկանշական է, որ համաձայն այդ օրենքի նախագծի՝ Պետդեպարտամենտին կից պետք է ստեղծվի Ժողովրդավարական շարժման և անցումային փուլի վարչություն, որն, իր հերթին, ունենալու է

[1] http://vip.lenta.ru/news/2005/05/19/democracy/

համապատասխան բաժանմունքներ ամերիկյան դեսպանատներում: Ընդհանուր առմամբ ծրագրի կազմակերպչական մասի վրա ենթադրվում է երկու տարում ծախսել մոտ $250 մլն:

Սենատորների նախաձեռնությունը զարգացրեց նախագահ Բուշը: Նա հայտարարեց «ակտիվ արձագանքման կորպուսի» ստեղծման մասին, որի խնդիրն է օգնել «երիտասարդ ժողովրդավարություններին հասնել խաղաղության և ազատության...»: Այդ կորպուսը կազմված է լինելու դիվանագիտական և այլ ծառայությունների աշխատակիցներից, որոնք, ըստ ամերիկյան նախագահի, կարող են արագ ուղարկվել «ճգնաժամային կետեր»՝ որպես «քաղաքացիական փրկիչներ»: Վերջիններս պատրաստ պետք է լինեն հաշված օրերի ընթացքում իրագործել ժողովրդավարությանն անցման ծրագրերը: Նշենք, որ ամերիկյան տվյալների համաձայն՝ Բուշի նախագահության տարիներին ժողովրդավարական փոփոխությունների նպատակով ծախսվել է ավելի քան $4,6 մլրդ, իսկ միայն 2006թ. համար Սպիտակ տունը Կոնգրեսից պահանջել է $1,3 մլրդ[1]:

Նկատենք, որ այս ամենը հիշեցնում է սոցիալիզմն անաղարտ պահելու և կոմունիստական գաղափարախոսությունն արտահանելու վերաբերյալ, այսպես կոչված, «Բրեժնևի դոկտրինը»: Համաձայն դրա՝ խորհրդային զինված ուժերը, մասնավորապես, ներխուժեցին Պրահա և Քաբուլ: Այդ ժամանակաշրջանում «ակտիվ արձագանքման կորպուսի» դերը կատարում էին Կենտկոմի և հատուկ ծառայությունների համապատասխան բաժինները: Ավելի վաղ բոլշևիկյան առաջնորդներ Տրոցկին և Ռադեկը ձգտում էին հեղափոխություններ կազմակերպել Եվրոպայում՝ համադրելով Պարվուսի կողմից մշակված ֆինանսական տեխնոլոգիաները «պերմանենտ հեղափոխությունների» գաղափարախոսության հետ [7]: Այդ «կոմինտերնյան հեղափոխությունները», ինչպես և ավելի վաղ իրագործված հեղափոխությունը Ռուսաստանում, բովանդակային նմանություններ ունեն արդի «գունավոր հեղափոխությունների» հետ: Սակայն պետք է ընդունել, որ հեղափոխության ներկայիս «պրոֆեսիոնալները» գործում են ավելի տեխնոլոգիականացված սխեմաներով[2]: Միևնույն ժամանակ, գաղափարախոսության «պետականացումը» և ձևականացումը, այն որպես աշխարհաքաղաքական գործիք օգտագործելը միշտ հղի են անկանխատեսելի հետևանքներով:

2. Չլուծված հիմնախնդիրներ և նոր մարտահրավերներ

Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ հեղափոխության ենթարկված երկրներն արագորեն փոխում են իրենց աշխարհաքաղաքական կողմնորոշումները, այսինքն՝ «հեղափոխություն» պատվիրողները բավական օպե-

[1] http://pda.lenta.ru /news/2005/05/19/democracies/
[2] Տե՛ս, օրինակ, Վենսեն Ժովեր, Հեղափոխության կերտողները, «Հանրապետական», #7, էջ 48:

ռատիվ հասնում են իրենց առջև դրված նպատակներին: Սակայն «հեղափոխված» երկրներում նոր իշխանություններն իրենց քայլերով լուրջ բարդություններ են ստեղծում ներքին և արտաքին քաղաքականությունում, տնտեսությունում և այլ ոլորտներում, ինչը կարող է հասցնել ճգնաժամի (ինչպես դա տեղի է ունենում Ուկրաինայում): Որպես հետևանք՝ անխուսափելիորեն արժեզրկվում են այն գաղափարախոսական կարգախոսները (նախկինում՝ կոմունիզմ, ներկայումս՝ ժողովրդավարություն), որոնցով իրագործվել է հեղափոխությունը: Այսինքն՝ կարելի է ամրագրել, որ աշխարհագաղափարախոսական եզրաբանության և իրագործման մեթոդաբանության տիրապետումը նպաստում է ԱՄՆ մարտավարական հաջողություններին: Սակայն ռազմավարական հեռանկարում արդյունքները կարող են բացասական լինել ոչ միայն հեղափոխության ենթարկված, այլ նաև հեղափոխությունն իրագործած երկրի համար: Հիշենք, որ նման տրամաբանությամբ զարգացան իրադարձությունները ԽՍՀՄ-ում Չեխոսլովակիան և Աֆղանստանն օկուպացնելուց հետո:

Կարելի է համարել, որ ներկայիս ամերիկյան ռազմավարության անհաջողությունները համակարգային ճգնաժամի արդյունք են: Ըստ ամերիկյան սոցիոլոգ-քաղաքագետ Ի.Վալերստայնի՝ կոմունիզմի փլուզումը հանգեցրեց նաև ազատականության՝ որպես այսօրվա աշխարհակարգը որոշող գեոմշակույթի, փլուզմանը [8, c. 6]: Արժեքային համակարգի այդ կազմալուծումն ամերիկյան արձակագիր Գոռ Վիդալը դիպուկ անվանել է «ամերիկյան երազանքի էռոզիա»: Հոգևոր փլուզումն իր բացասական ազդեցությունն է թողնում սոցիալ-տնտեսական ոլորտի այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են գիտությունը և կրթությունը, սոցիալական ապահովությունը և առողջապահությունը[1]: Որոշ փորձագետների կարծիքով՝ «ԱՄՆ-ը թևակոխել է մի փուլ, երբ կորպորատիվ կապերն ուժգնորեն ազդում են իշխանության բոլոր ճյուղերի վրա» [9]: Այդ գործընթացների արդյունքում տեղի են ունենում ազգային պետության գործառույթների սեփականաշնորհում և այդ պետության թուլացում, հանրությունը տարանջատվում է քաղաքականությունից, ձևավորվում են «լեգալ կոռուպցիան» և այլ բացասական սոցիալական երևույթներ:

Առանցքային նշանակություն ունեցան 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունը և դրան հաջորդած «հակաահաբեկչական պատերազմը» (տեղին է նկատել, որ վերջինիս արդյունքում ահաբեկչական գործողությունների թիվը, ԿՀՎ տվյալներով, աշխարհում կտրուկ աճել է): Ինչպես նշում է ֆրանսիացի հետազոտող Է.Տոդը, «ԱՄՆ-ը, ահաբեկչությանը վերագրելով ունիվերսալ ուժի կարգավիճակ, ինստիտուցիոնալացնում է պատե-

[1] http://www.inosmi.ru/translation/222155html

բազմի մշտական վիճակը երկրագնդի մասշտաբով» [10, c. 9]: Այս թեզի գործնական հաստատումը տեսնում ենք մերձավորարևելյան և կենտրոնաասիական գործընթացներում, ինչպես նաև ամերիկյան բազմաթիվ դոկտրինալ բնույթի փաստաթղթերում, որոնց ներածականներում կարելի է հանդիպել «Ամերիկան գտնվում է պատերազմական վիճակում» արտահայտությանը: Ակնհայտ է, որ գերտերությունը հավակնում է վերահսկել ողջ աշխարհը: Սակայն նման գերխնդրի լուծումը պահանջում է ռեսուրսներ, որոնց չի տիրապետում անգամ Միացյալ Նահանգները: Այսինքն՝ գոյություն ունի խզում նախագծերի և ռեսուրսների միջև, ինչը, որպես կանոն, հանգեցնում է անհաջողության:

Վաշինգտոնի մենատիրական ձգտումները և հատկապես անհեռանկար պատերազմը Իրաքում հարուցել են համաշխարհային հանրության դժգոհությունը և արդյունքում՝ հակաատլանտյան մոտիվներն իրենց զգալ են տալիս ամենատարբեր երկրների քաղաքականություններում: ԵՄ եվրակենտրոն հատվածում ձևավորվում է այն քաղաքական գիտակցությունը, թե ներկայումս պետք է որոշ զիջումներ անել ԱՄՆ-ին՝ սպասելով, որ վերջինս «կոտրվի» տնտեսական դժվարությունների հետևանքով: Դա, առաջին հերթին, վերաբերում է ԱՄՆ բյուջեի խոշոր դեֆիցիտի հետ կապված խնդիրներին և դոլարի՝ որպես համաշխարհային հատուկ կարգավիճակ ունեցող տարադրամի, դիրքերի զիջմանը: «Գունավոր հեղափոխությունների» քաղաքականությունը լրացուցիչ բարդացրել է ԱՄՆ-Ռուսաստան հարաբերությունները: Անգամ Կանադան հաճախ տարանջատում է իրեն ԱՄՆ գլոբալ քաղաքականությունից: Այդ երկիրն, օրինակ, հրաժարվեց անդամակցել ամերիկյան հակահրթիռային համակարգին, տնտեսական հարաբերություններ է զարգացնում Կուբայի հետ և այլն: Գուցե սա մանրուք թվա, սակայն հատկանշական է, որ նախագահ Բուշի վերընտրումից հետո բազմաթիվ ամերիկացիներ ի նշան բողոքի լքեցին Միացյալ Նահանգները և վերաբնակվեցին Կանադայում:

Ամերիկյան ծրագրերը հանդիպում են հարաճուն դիմադրության նաև այլ տարածաշրջաններում և մայրցամաքներում: Վենեսուելայի ղեկավար Հուգո Չավեսի Պեկին կատարած այցի արդյունքում չինացիները ոչ միայն մոտ $500 մլն ներդրումներ են կատարել այդ լատինաամերիկյան երկրում (ի դեպ, մոտավորապես նույնքան տրվել է Կուբային), այլև պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի Վենեսուելան նավթ մատակարարի Չինաստանին ԱՄՆ արտահանվող նավթի հաշվին: Իր հերթին՝ Մոսկվան որոշում է ընդունել վաճառել Վենեսուելային ինքնաձիգներ և մարտական ուղղաթիռներ: Իրանի նախկին նախագահ Խաթամին այցելել է Վենեսուելա, և այդ երկրների միջև սկիզբ է առնում համագործակցություն, որի հենքը

հակաամերիկանիզմն է: Ուրվագծվում են նաև այլ, փոքր-ինչ տարաշխարհիկ քաղաքական ձևաչափեր արաբական աշխարհի և լատինաամերիկյան պետությունների միջև [11]: Այս ամենը լրջորեն անհանգստացրել է Բուշի վարչակազմին. Քոնդոլիզա Ռայսը հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ և մեղադրեց լատինաամերիկյան իշխանություններին «սոցիալիստական» միտումների մեջ:

Ամփոփելով լատինաամերիկյան թեման՝ կարելի է ամրագրել, որ այդ մայրցամաքում ընթացող զարգացումներին անմիջական աջակցություն են ցուցաբերում Չինաստանը և Ռուսաստանը, առաջինը՝ տնտեսական, երկրորդը՝ ռազմական ոլորտներում: Այդ սխեման աշխատում է նաև Միջին Արևելքում: Հայտնի է, որ Չինաստանն այսօր Իրանի գլխավոր տնտեսական գործընկերներից է: Իր հերթին՝ Ռուսաստանը այդ երկրին մատակարարում է միջուկային և հրթիռային տեխնոլոգիաներ:

Վերոհիշյալ թռուցիկ դիտարկումներից հետևում է, որ ԱՄՆ-ը բազմաթիվ քաղաքական և տնտեսական կորուստներ է կրում: Ինչպես նշում է ամերիկյան վերլուծաբաններից մեկը, «ԱՄՆ-ը կորցնում է բարեկամներին և ձեռք է բերում ախոյաններ» [12]: Սակայն, միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ԱՄՆ ռազմավարական նախաձեռնությունը գերակայելու է այնքան ժամանակ, մինչև չձևավորվի իր հայեցակարգային և նյութական ռեսուրսներով ԱՄՆ-ին համարժեք ուժ: Շատերն արդարացիորեն կարծում են, որ նման ուժի կենտրոն կարող է հանդիսանալ միայն Չինաստանը:

3. Չինաստան. այլընտրանքային գերտերություն

Ամերիկյան վերլուծաբանները հաճախ են շեշտում, թե Չինաստանը հզորանում է ոչ թե նրա համար, որպեսզի ինտեգրվի գլոբալ քաղաքական և տնտեսական համակարգում, այլ հակառակը՝ որպեսզի փոխի այդ համակարգը: Անշուշտ, նման փոփոխությունը, առաջին հերթին, կազդի ԱՄՆ հատուկ կարգավիճակի վրա, և Չինաստանի հզորացումը ամերիկյան ընտրանին իրավացիորեն ընկալում է որպես մարտահրավեր: Մասնավորապես, դրա մասին է վկայում Չինաստանի վերաբերյալ հետազոտական և հրապարակախոսական նյութերի թվի աճը, որոնցում կարելի է հանդիպել Չինաստանի հզորության սահմանափակմանն ուղղված ամենազանազան նախագծեր: Ոմանց կարծիքով, ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունները կարելի է բնութագրել որպես սառը պատերազմ, և հեռու չէ այն օրը, երբ այդ «սառը» պատերազմը կարող է վերածվել «տաքի»:

ԱՄՆ և Չինաստանի արդի ամենամրցունակ տերություններ լինելու փաստը գլխավորապես պայմանավորված է նրանով, որ երկու տերություններն էլ գործում են համակարգված և հենվում են սեփական գաղափարա-

խոսական ու հայեցակարգային դրույթների վրա: Հարկ է նաև նշել, որ արդի ամերիկյան և չինական գլոբալ ռազմավարության փիլիսոփայությունները որոշ էական հարցադրումներում ընդհանուր եզրեր ունեն: Դրանք զգալի չափով հենված են ավանդական, սակայն ունիվերսալ բնույթ կրող չինական ռազմավարության թեզերի վրա, որոնք մ.թ.ա. 5-6-րդ դարերում մշակել են Սուն Ցզին և նրա հետևորդները [13]: Հայտնի է, որ ԱՄՆ-ում այդ ռազմավարությունը սկսեցին կիրառել հատուկ ծառայությունները՝ Ալեն Դալեսի նախաձեռնությամբ, իսկ հետագայում «չինական մոտիվները» ներդրվեցին նաև տեղեկատվական պատերազմների տեխնոլոգիաներում [14]: Հատկանշական է, որ վերջերս մշակված «ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարություն»[1] անվանումը կրող հայեցակարգում ընդունվում է, որ ժամանակակից քաղաքական գործընթացները պարունակում են անորոշության մեծ չափ: Դա դժվարացնում է անգամ կարճաժամկետ կանխատեսումները և ռազմավարությունն իրագործողներից պահանջում է մեծ ճկունություն: Ամերիկյան ստրատեգների այս թեզերն ընդհանուր եզրեր ունեն Սուն Ցզիի ռազմավարական դրույթների հետ:

Չինաստանի տեղեկատվական և հոգեբանական պատերազմների հայեցակարգերը նույնպես հենված են ավանդական պատկերացումների վրա: Երկիրը զգալի հաջողությունների է հասել այդ ոլորտում: Դա արտահայտվում է, մասնավորապես, չինական մարտաձևերի և մարտաֆիլմերի լայն տարածմամբ, որոնցում լավագույնս ներկայացվում է չինացու դրական կերպարը և քարոզվում է չինական արժեհամակարգը: Այսպիսով, զարմանալի չէ այն փաստը, որ չնայած միջազգային հեղինակություն ունեցող որոշ ԶԼՄ ջանքերին, նրանց չհաջողվեց Չինաստանից կերտել միջազգային հանրությանը վտանգ ներկայացնող երկրի կերպար: Ավելին, այսօր այդ տերության «իմիջային» վարկանիշն ավելի բարձր է, քան ԱՄՆ-ինը: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում հարցվողների 65%-ը դրականորեն է մոտենում ՉԺՀ-ին, մինչդեռ Ամերիկայի նկատմամբ դրական վերաբերմունք ունի ընդամենը 55%-ը: Ֆրանսիայում, Իսպանիայում և Հոլանդիայում Չինաստանի նկատմամբ դրական մոտեցում ունի հարցվողների մոտ 55-60%-ը, իսկ ԱՄՆ-ին՝ ընդամենը 40-45%-ը: Իսլամական աշխարհում այդ տարբերությունն ավելի զգալի է: Այսինքն՝ գլոբալ տեղեկատվական դաշտում, որտեղ ձևավորվում է այս կամ այն երկրի նկատմամբ միջազգային հանրության կարծիքը, նախաձեռնությունը պատկանում է Չինաստանին:

Ժամանակակից Չինաստանում ավանդական ռազմավարությունը լայնորեն կիրառվում է ոչ միայն քաղաքականությունում կամ ռազմական գոր-

[1] National Defense Strategy of the United States of America, http://globalsecurity.org./military/library/policy/dod/nds-usa_mar2005_i.htm

ծում, այլև կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Կարելի է փաստել, որ ավանդույթների վրա հենված ժամանակակից Չինաստանը հիշեցնում է իր պատմական անցյալի հզոր կայսրությունները, որտեղ հայտնագործվել են թուղթը, վառոդը և հրթիռները, սկիզբ է առել տպագրությունը:

ՉԺՀ-ն սոցիալիստական երկիր է, սակայն նրա գաղափարախոսությունում կոմունիստական դրույթները համեմված են ավանդական պատկերացումներով (Դեն Սյաոպինի բնութագրմամբ՝ «սոցիալիզմ ազգային առանձնահատկությամբ»): Այսպիսով, ձևավորվում է բավական կենսունակ մի համակարգ, որում առկա են ռազմատնտեսական «մոբիլիզացիոն» պետության, սոցիալական ուղղվածություն ունեցող ազգային հասարակությանը բնորոշ տարրերը [15, c. 608]:

Չինական արդի ռազմավարությանը բնորոշ է որոշակի դուալիզմ՝ միաժամանակ ընդունվում են և՛ անցյալի հեղափոխական ժխտման, և՛ ավանդականի անաղարտ պահպանման թեզերը: Հայեցակարգային նման մոտեցումներն ընդհանուր եզրեր ունեն անգլո-սաքսոնյան քաղաքական ավանդույթի հետ: Այս համատեքստում ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ վերջին ժամանակներս զորեղանում է չինական ընտրանու «նեոպահպանողական» մասը, որը Չինաստանը տեսնում է որպես գերտերություն և հակակշիռ ԱՄՆ-ին [16, c. 363]: Այս առիթով նշենք, որ համաձայն 1993թ. Կոմկուսի Կենտրոնական կոմիտեի Ռազմական խորհրդի ընդունած դոկտրինի՝ 2019թ. մատույցներում Չինաստանը հաղթելու է «երեք հյուսիսներին»՝ նկատի ունենալով Հյուսիսատլանտյան դաշինքը, Ռուսաստանն ու Միացյալ Նահանգները:

Չինական արդի համակարգը, որը երբեմն բնութագրվում է որպես «կարմիր կոնֆուցիականություն», փաստորեն, մի գաղափարախոսության մարմնավորում է, որը չունի դոգմատիկ բանաձևեր. այն ճկուն մեթոդաբանություն է, որը տարբեր իրավիճակներում թելադրում է համարժեք լուծումներ: Այս առումով չինական և ամերիկյան գաղափարախոսությունները նույնպես ունեն որոշակի ընդհանուր եզրեր:

Միևնույն ժամանակ, ամերիկյան և չինական մոտեցումների միջև, ըստ մեզ, գոյություն ունի սկզբունքային տարբերություն. չինական քաղաքական փիլիսոփայությունը գործընթացները և զարգացումները դիտարկում է գործնականում անսահմանափակ ժամանակային տիրույթում: Չինական ասույթն այն մասին, որ «եթե երկար նստես գետափին, ապա ջրերը կբերեն թշնամուդ դին», թերևս, լավագույնս է ներկայացնում ժամանակի և գործողությունների վերաբերյալ չինացիների պատկերացումները: Մինչդեռ արևմտյան քաղաքական մոտեցումներում գործողության ժամանակային տիրույթները խիստ որոշակի են և սահմանափակ: Ավելին, ԱՄՆ-ում իշ-

խող «գերկանխարգելիչ» դոկտրինը ենթադրում է «առաջ ընկնել» ժամանակից և այդպիսով արդեն այսօր ձևավորել ապագան:

Չինական գաղափարախոսության նյութականացված արդյունքը նրա տնտեսական ձեռքբերումներն են: Համաշխարհային բանկի տվյալներով՝ այդ երկրի տնտեսական համակարգն իր ծավալներով զիջում է միայն ԱՄՆ-ին: ՉԺՀ ՀՆԱ-ն, եթե հաշվարկները կատարվում են յուանի ռեալ գնողունակությունը հաշվի առնելով, արդեն մոտենում է $7 տրիլիոնի (ԱՄՆ ցուցանիշը $10,5 տրիլիոն է, հաջորդ տեղերը զբաղեցնում են Ճապոնիան, Հնդկաստանը և հետո նոր՝ Գերմանիան, Ֆրանսիան, $1,3 տրիլիոնով տասներորդ տեղն է զբաղեցնում Ռուսաստանը): Սակայն, հաշվի առնելով Չինաստանի 1,3 մլրդ բնակչությունը, այդ տերության քաղաքացիներն այնքան էլ հարուստ չեն: Ներկայումս մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը կազմում է մոտ $4 500, մինչդեռ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը հասնում է $34 000-ի: Սակայն 20 տարի հետո, համաձայն հաշվարկների[1], Չինաստանի տարեկան 9,5% աճ ցուցաբերող տնտեսությունը (ԱՄՆ միջին աճը կազմում է 3%) մեկ շնչին բաժին ընկնող եկամտով կզիջի ԱՄՆ-ին ընդամենը երկու անգամ, իսկ նրա բացարձակ ՀՆԱ-ն կգերազանցի ամերիկյան ցուցանիշը: Ուղիղ ներդրումների ծավալով՝ $53 մլրդ, Չինաստանն արդեն այսօր առաջին տեղում է՝ առաջ անցնելով ԱՄՆ-ից և Գերմանիայից: Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) տվյալների՝ ամենախոշոր ներդրողը Չինաստանում ԱՄՆ-ն է, իսկ երրորդ տեղը, որքան էլ տարօրինակ թվա, զբաղեցնում է Թայվանը:

Չինաստանում արագ զարգանում են առաջավոր տեխնոլոգիաները և գիտատար արտադրությունները: Դեռ 1980-ականների սկզբին հիմք դրվեց թվով 10 խոշոր գիտատեխնիկական նպատակային ծրագրերի, և ներկայումս ՉԺՀ-ում գործում են մոտ 23 000 ինստիտուտ, աշխատում են 1,5 մլն գիտաշխատող և ինժեներ, ինչը բացարձակ թվերով առաջին ցուցանիշն է աշխարհում: Վերջին 20 տարում գիտության ֆինանսավորումն աճել է ավելի քան 8 անգամ, իսկ ծախսերը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների բնագավառում կազմում են ՀՆԱ 5%-ը:

Ներկայումս Հարավարևելյան Ասիայի (ՀԱԱ) տնտեսության մի զգալի հատվածը վերահսկվում է չինական խոշոր ընկերությունների կողմից, իսկ այդ երկրների տնտեսական ընտրանին ուսանում է չինարենը (օրինակ՝ Հարավային Կորեայում գրեթե բոլոր կրթված մարդիկ կարդում են չինական հիերոգլիֆները): Պատահական չպետք է համարել տեղեկատվական դաշտում հայտնված այն լուրերը, թե ՀԱԱ տարածաշրջանում կարող է ընդունվել միասնական տարադրամ՝ յուանը:

Չինաստանի տնտեսության հիմնախնդիրը էներգետիկ գործոնն է:

[1] Ольга Власова, Владимир Попов, Алексей Хазбиев, Великий поход, «Эксперт», #25, с. 15, 2005.

Արտադրելով օրական 3,6 մլն բարել սեփական նավթ՝ Չինաստանը սպառում է ավելի քան 6,5 մլն (համեմատության համար նշենք, որ ԱՄՆ նույն ցուցանիշները կազմում են 8,7 և 20,5 մլն բարել)։ *International Energy Agency*-ի տվյալներով՝ արտադրության աճի ապահովման համար 2010թ. նավթի ներկրումը պետք է կրկնապատկվի, իսկ 2030թ. Չինաստանը սպառելու է օրական մինչև 10 մլն բարել նավթ, այսինքն՝ այնքան, որքան այսօր ներկրում է ԱՄՆ-ը։ Էներգետիկայի համատեքստում խիստ կարևորվում են հարաբերությունները Ռուսաստանի, Ղազախստանի և Իրանի հետ։ Վերջինիս հետ 2004-ին կնքվել են պայմանագրեր, համաձայն որոնց՝ ՉԺՀ-ն 30 տարվա ընթացքում պետք է գնի Իրանից 250 մլն տ հեղուկ գազ, իսկ նավթի ներկրումը հասցնի օրական 150 հազար բարելի։ Այսօր Չինաստանն ապրանքաշրջանառության ցուցանիշով դարձել է Իրանի կարևորագույն տնտեսական գործընկերը։

Դինամիկ է զարգանում ռազմական ոլորտը, որտեղ հատկացումներն ավելանում են տարեկան 12-15%, և ռազմական բյուջեն 2005թ., համաձայն որոշակի մեթոդաբանությամբ կատարված հաշվարկների[1]՝ արդեն իսկ կարող է կազմել $90 մլրդ։ Չինաստանի միջուկային ներուժի վերաբերյալ գնահատականները խիստ տարբեր են (հիշատակվում են, մասնավորապես, 400-ից մինչև 600 միջուկային մարտագլխիկներ ունեցող բալիստիկ հրթիռները)։ Ռազմական ոլորտին վերաբերող տվյալների նման ցրվածությունը, թերևս, պայմանավորված է տեղեկատվության պահպանման չինական համակարգով, համաձայն որի՝ «գաղտնիքն ինքն է հանդիսանում սպառնալիք» [17]։ Բնորոշ է, որ եթե նախկինում չինացիները գնում էին ռուսական զենքի փոքրինչ հնացած տեսակները, ապա այսօր նրանք պահանջում են ամենաարդիական համակարգերը։ Ներկայումս չինացիները ձգտում են վերացնել Ռուսաստանի և ԵՄ արգելքները ՉԺՀ-ին արդիական զենք վաճառելու վերաբերյալ և հաղթահարել ԱՄՆ դիմադրությունն այդ խնդրում[2]։

2000թ. սկզբներին աշխուժորեն քննարկվում էր «Ասիական ՆԱՏՕ»-ի տարբերակը, որի հնարավոր մասնակիցներն էին համարվում ՉԺՀ-ն, Ճապոնիան, Հյուսիս. և Հարավ. Կորեաները։ Համաձայն այդ տարածաշրջանի քաղաքական ավանդույթների և այսօրվա իրողության՝ «ավագ եղբայրը» այդ համակարգում հանդիսանում է ՉԺՀ-ն [18]։ Այս հանգամանքը կարող է կազմալուծել ԱՄՆ ստեղծած ներկայիս տարածաշրջանային քաղաքական կառուցվածքը, որտեղ ուժերի հաշվեկշիռը պահպանվում է տարածաշրջանի երկրների հակասությունների շնորհիվ։

Սակայն Չինաստանի ռազմավարական ծրագրերը դուրս են գալիս տարածաշրջանային սահմաններից, և այս համատեքստում ավելի քան կարևորվում են Ռուսաստանի հետ հարաբերությունները։

[1] The Military Power of the People's Republic of Chine (Anual Report to Congress), p. 22, 2005.
[2] Китайские колокольчики в головах европейских политиков, Vip lenta ru, 09.03.2005.

4. Նոր «Նոր աշխարհակարգ» և ՇՀԿ կայացումը

Անդրադառնալով Ռուսաստանի և Չինաստանի հարաբերություններին՝ պետք է ամրագրել, որ այդ տերությունները միմյանց հետ չլուծված հիմնախնդիրներ ունեն: Դեռ 1860թ. Պեկինյան պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանը, օգտվելով «օպիումային» պատերազմում Չինաստանի՝ անգլիացիներից կրած պարտությունից, կայսրությանը միացրեց Ուսսուրական երկրամասը և այլ տարածքներ, որոնց ընդհանուր մակերեսը չինացիները գնահատում են մոտ 1,5 մլն քառ. կմ: Այդ խնդիրը վերարծարծեց Մաո Ցզեդունը, ինչը և 60-ականների վերջին Դամանսկի կղզու շուրջ ԽՍՀՄ-ՉԺՀ զինված բախումների հիմք հանդիսացավ: Հետագայում Դեն Սյաոպինը հորդորեց չինացիներին մոռացության մատնել կորցրած տարածքների խնդիրը:

Նախագահ Պուտինի՝ այս տարի Պեկին կատարած այցի ժամանակ կողմերը հայտարարեցին սահմանային բոլոր հարցերի լուծման մասին, չնայած տարածքային խնդիրները, ինչպես հայտնի է, երկար են պահպանվում ազգերի հիշողության մեջ: Բոլոր պարագաներում տպավորությունն այնպիսին է, որ կողմերն ըմբռնում են՝ արդիական խնդիրներն ավելի հրատապ են, քան պատմական անցյալը, ինչը պայմանավորված է Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում ԱՄՆ հայտնի քաղաքականությամբ: Այսօրվա քաղաքական իրողություններն ուղղակի թելադրում են ՉԺՀ-ին և Ռուսաստանին համագործակցել միմյանց հետ [19]: Դրա մասին է վկայում այս տարվա հուլիսի 1-ին Մոսկվայում Վլադիմիր Պուտինի և Խու Ցզինտաոյի ստորագրած «ՌԴ և ՉԺՀ համատեղ հռչակագիրը 21-րդ դարի միջազգային աշխարհակարգի վերաբերյալ» անունը կրող փաստաթուղթը[1]:

Սառը պատերազմից հետո սա, թերևս, առաջին նախադեպն է, երբ երկու մեծ տերություններ համատեղ և ուղղակիորեն հայտարարում են ԱՄՆ քաղաքական տրամաբանության հետ իրենց անհամաձայնության մասին: Նման փաստաթղթի հայտնվելը կարող է կարևորագույն նշանակություն ունենալ քաղաքական գլոբալ զարգացումների համար և, մասնավորապես, վկայում է այն մասին, որ.

- ՌԴ-ՉԺՀ հարաբերությունները թևակոխել են նոր, միմյանց նկատմամբ բարձր վստահությամբ և ռազմավարական համագործակցությամբ բնութագրվող փուլ: Մասնավորապես, այդ է վկայում երկու երկրների միջև տնտեսական և ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցության մեծ ծավալը:
- ԱՄՆ քաղաքականությունը ՌԴ-ի և ՉԺՀ-ի նկատմամբ որակական զարգացում է ապրել. ներկայիս ամերիկյան ռազմավարությունը լուրջ մարտահրավեր է այդ երկու տերություններին: Դա ստիպում է ռուսներին և չինացիներին միավորել իրենց հնարավորությունները:

[1] http://www.ln.mid.ru/brp_4.nsf/sps/968AE14D450C2FEFC3257032003B3AE1

- Երկու երկրների ղեկավարությունները գտնում են, որ իրենք արդեն ունեն բավականաչափ ռազմաքաղաքական և տնտեսական ներուժ, որպեսզի կարողանան դիմակայել ԱՄՆ մենատիրությանը:

Հռչակագրի բովանդակության վերլուծությունը հնարավորություն է տալիս ըմբռնել այն գաղափարական սկզբունքները, որոնցով պատրաստվում են շարժվել կողմերն իրենց նպատակներին հասնելու համար.

1. Համաձայն փաստաթղթի, ներկայիս գլոբալացման գործընթացները պետք է հանգեցնեն տնտեսական ու տեղեկատվական դաշտերի ինտեգրման, սակայն չպետք է խոչընդոտեն բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորմանը: Այսպիսով, ամրագրվում է սկզբունքային անհամաձայնությունը միաբևեռ աշխարհակարգի գաղափարի նկատմամբ:
2. Կողմերը հանդես են գալիս որպես միջազգային իրավունքի պահպանման կողմնակիցներ և ամրագրում են զարգացման սեփական ուղի ընտրելու ժողովուրդների իրավունքը: Այսինքն՝ հանդես են գալիս ամերիկյան այն սկզբունքի դեմ, ըստ որի՝ բոլոր երկրները պետք է զարգանան նույնատիպ ճանապարհով:
3. Ընդգծվում է ՄԱԿ կարևորությունը միջազգային գործերում և այդպիսով մերժվում է ՄԱԿ դերի արժեզրկմանն ուղղված ամերիկյան ռազմավարությունը: Հատուկ անդրադարձ է կատարվում նաև ընդդեմ ամերիկյան «քաղաքակրթությունների բախման» տեսության:
4. Ամրագրվում է զանգվածային ոչնչացման զենքի կիրառումը և տարածումը կանխելու անհրաժեշտությունը: Սա ուղղված է այն իրողության դեմ, որ ԱՄՆ-ը առ այսօր չի ստորագրել քիմիական և կենսաբանական զենքի արգելման կոնվենցիաները և մշակում է միջուկային զենքի «լոկալ» օգտագործման ծրագրեր:
5. Հռչակագրում հատուկ ուշադրություն է դարձվում «տարածաշրջանային բլոկների» և ընդհանրապես տարածաշրջանային ինտեգրացման խնդիրներին՝ առաջին հերթին նկատի ունենալով ԱՄՆ հայտնի քաղաքականությունն այլ տերությունների միջև դաշնակցային գործընթացների կանխարգելման ուղղությամբ և այդպիսով կարևորելով Չինաստանի ու Ռուսաստանի միջև ռազմավարական համագործակցության գործընթացները:
6. Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը ներկայացվում է պետությունների ինքնիշխանության հարգման համատեքստում: Այս թեզը, ակնհայտորեն, նույնպես ուղղված է ԱՄՆ-ի դեմ: Տեղին է նշել, որ ամեն տարի ՉԺՀ-ն (ինչպես դա անում է Պետդեպարտամենտը) հրապարակում է հատուկ տեղեկագիր, որտեղ բերվում և մեկնաբանվում են Միացյալ Նահանգներում մարդու իրավունքների խախտման դեպքերը:

Ակնհայտ է, որ հռչակագրի տրամաբանությունն ուղղված է ամերիկյան մոտեցումների դեմ: Հատկանշական է, որ փաստաթուղթն ամփոփվում է այն եզրակացությամբ, թե ստորագրված դեկլարացիան արտահայտում է կողմերի պատկերացումները «Նոր աշխարհակարգի» վերաբերյալ:

Հռչակագրի ընդունմանը հետևեց ՇՀԿ գագաթաժողովը Աստանայում, որտեղ հայտարարվեց Իրանի, Հնդկաստանի և Պակիստանի՝ կազմակերպության դիտորդի կարգավիճակ ստանալու մասին: Նշենք, որ Հնդկաստանի և Պակիստանի մասնակցության խնդիրը քննարկվում էր դեռևս 2002-ից: ՇՀԿ-ին վերջիններիս մասնակցելու հարցում (հաշվի առնելով նրանց միջև լարված, երբեմն պատերազմականի հասնող հարաբերությունները) փորձագիտական շրջանակներում առկա էր զգալի թերահավատություն, սակայն իրավիճակը ներկայումս հարթվելու միտում ունի: Պակիստանը, անշուշտ, սերտ կապեր ունի ԱՄՆ-ի հետ, սակայն այդ երկիրն ակտիվորեն համագործակցում է նաև ՉԺՀ-ի հետ (նախկինում նրանք համագործակցել են միջուկային տեխնոլոգիաների ոլորտում):

ՉԺՀ-ն ակտիվ քաղաքական-տնտեսական կապեր է հաստատել ՇՀԿ անդամ բոլոր երկրների հետ: Առանձնապես ուշագրավ են հարաբերությունները Ղազախստանի հետ, երկիր, որը տարածաշրջանային տերության վերածվելու նկրտումներ ունի: ՇՀԿ գագաթաժողովի նախօրեին նախագահներ Նազարբաևը և Խու Ցզինտաոն կնքեցին պայմանագիր՝ Ղազախստանը Չինաստանի հետ կապող մոտ 3000 կմ երկարությամբ և $2.5 մլրդ արժողությամբ երկաթգծի շինարարության վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ՇՀԿ-ում այս կամ այն կարգավիճակով կենտրոնացել են 5 միջուկային պետություն (Իրանի միջուկային ներուժի հնարավորություններն այսօր կասկած չեն հարուցում): ՇՀԿ ընդլայնվելը վկայում է, որ եվրասիական խոշոր տերությունները որոշակիորեն հիասթափված են ԱՄՆ-ից: Նրանք փորձում են ինքնուրույն կամ հարևանների հետ համատեղ լուծել տարածաշրջանային խնդիրները՝ առանց միջնորդների: Այս համատեքստում պետք է ընկալել Աստանայի գագաթաժողովի ամփոփագրում ամրագրված այն դրույթը, համաձայն որի՝ ՇՀԿ անդամ երկրների տարածքը մինչև 2020թ. պետք է վերածվի ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժման գոտու: Ի լրումն՝ հետագայում աշխատանքային կարգով որոշվեց, որ ՇՀԿ անդամները արտակարգ իրադրությունների պարագայում միմյանց համար բացում են իրենց պետական սահմանները:

ՇՀԿ նման ակտիվության ազդակ հանդիսացավ Անդիջանի (Ուզբեկստան) «հեղափոխական» խռովությունը: Բոլորը համոզվեցին, որ պասիվ կեցվածքը կարող է լրջորեն վտանգել իրենց երկրների ազգային անվտանգությունը և ինքնիշխանությունը: Ակնհայտ էր նաև, որ արմատական իսլա-

միստներին իշխանության բերելու ծրագրերի իրականացման դեպքում նույն Ուզբեկստանը կարող էր էապես հետ գլորվել զարգացման ներկայիս մակարդակից: Այս հանգամանքների գիտակցման շնորհիվ զարգացումներն Ուզբեկստանում տարբերվեցին նախկին «հեղափոխական» սցենարներից:

Անդիջանյան խռովությունը դաժանորեն ճնշելուց հետո նախագահ Քարիմովն անմիջապես մեկնեց Պեկին և ապա՝ Մոսկվա, որտեղ նրան խոստացան տնտեսական և քաղաքական օգնություն: Այդ երաշխիքները թույլ տվեցին Ուզբեկստանի նախագահին փոխել ամերիկացիների հետ ունեցած հարաբերությունները: ԱՄՆ այն սպառնալիքին, թե Անդիջանի դեպքերի հետաքննությունը կքննարկվի ՄԱԿ-ում, Քարիմովը պատասխանեց ավելի քան կոշտ: Սկզբում սահմանափակվեցին Քարշի-Խանաբադում տեղակայված ԱՄՆ ավիաբազայի ինքնաթիռների թռիչքային հնարավորությունները: Հաջորդ քայլով առաջարկվեց ԱՄՆ-ին սեղմ ժամկետներում ընդհանրապես լքել Քարշի-Խանաբադը: Շեշտվեց, որ Ուզբեկստանի կառավարությունը կփոխհատուցի ամերիկացիներին կրած վնասների դիմաց: Ներկայումս տեղեկատվական դաշտում հայտնվել են տեղեկություններ այն մասին, թե ավիաբազայում ամերիկացիներին կարող է փոխարինել ՇՀԿ հակաահաբեկչական կառույցը, ինչին, սակայն, փորձում են ընդդիմանալ ամերիկացիները[1]: Բոլոր դեպքերում, Քարիմովի նման վճռական քայլերը կապված են Չինաստանի և Ռուսաստանի դիրքորոշումների հետ և վկայում են այն մասին, որ այդ տերությունները փորձում են համարժեք միջոցներ ձեռք առնել ԱՄՆ քաղաքականությանը դիմակայելու համար:

Այսպիսով, կարելի է ամրագրել, որ առաջին անգամ հետխորհրդային տարածքում Չինաստանը և Ռուսաստանը համատեղ առերես մրցակցել են Միացյալ Նահանգների հետ, և այդ մրցակցությունն ավարտվել է ոչ հօգուտ ԱՄՆ-ի: Փոխհամագործակցության զարգացման և, հետևաբար, ՇՀԿ ձևաչափի կայացման մասին են վկայում նաև նախադեպը չունեցող ռուս-չինական զինավարժությունները: Ըստ ամենայնի՝ այդ զինավարժությունները, ինչպես նաև դրանց նախորդած Ռուսաստանի զինված ուժերի բազմափուլ և բազմանպատակ զինավարժությունները պատասխան-ուղերձ են, որն ուղղված է ԱՄՆ-ին և նրա ռազմաքաղաքական գլոբալ ծրագրերին Եվրասիայում[2]:

Հետևություններ

Վերը շարադրվածը նպատակ չի հետապնդում մանրակրկիտ համադրել ԱՄՆ և ՉԺՀ առկա ներուժը, այլ ընդամենը փորձ է համառոտ ներկայացնել այն իրողությունները և զարգացման հնարավոր, այդ թվում նաև

[1] *В. Иванов, И. Плугатарев,* Бросок Москвы в Ханабад, НВО, 09.09.2005, http://nvo.ng.ru/primted/forces/2005-09-09/1_brosok.html

[2] *Виктор Мясников,* Сергей Иванов опробует свою доктрину, Независимая газета, 17.08.2005, http://www.ng.ru./printed/politics/2005-08-17/3_ivanov.html

գաղափարական ոլորտի միտումները, որոնք բնութագրում են այդ աշխարհաքաղաքական հսկաներին այսօրվա մրցակցային դաշտում: Ամրագրված միտումների պահպանման և զարգացման պարագայում զարգացումները պետք է ավարտին հասցնեն ներկայիս անցումային վիճակը և հանգեցնեն մի նոր իրավիճակի, որտեղ լինելու են առնվազն երկու հավասարազոր ուժի կենտրոններ: Սակայն կան հիմքեր կարծելու, որ նման երկբևեռ համակարգում չեն կրկնվելու ԱՄՆ-ԽՍՀՄ միանշանակ «սև-սպիտակ» հարաբերությունները, այլ լինելու են մրցակցության բազմաթիվ այլ դերակատարներ իրենց գաղափարական, աշխարհաքաղաքական, տնտեսական վեկտորներով:

Ակնհայտ է նաև, որ բազմակենտրոն քաղաքական զարգացումները հաճախ ենթարկվում են ոչգծային օրինաչափությունների, ինչն անօգուտ է դարձնում միտումների էքստրապոլյացիան անգամ կարճաժամկետ հեռանկարում [20]: Միևնույն ժամանակ, օգտակար է համառոտ դիտարկել այն գործոնների համախումբը, որոնք կարող են դերակատարում ունենալ հետագա զարգացումներում.

- Գլոբալ քաղաքական դաշտում այսօր առաջին պլան են մղվում գաղափարախոսական բաղադրիչները: Դրանց մրցունակությունը և կենսունակությունն էապես կանխորոշում են այս կամ այն աշխարհաքաղաքական դերակատարի կարգավիճակը: Ամերիկյան ազատականության դրույթների պետականացումը և ձևականացումը, ինչպես վկայում է ԽՍՀՄ փորձը, նկատելիորեն սկսել է արժեզրկել այդ գաղափարական համակարգը: Մինչդեռ չինական գաղափարախոսությունը, որտեղ հեղափոխական-կոմունիստական դրույթները համատեղված են ազգային-ավանդական պատկերացումների հետ, ներկայումս ավելի ճկուն և մրցունակ է թվում: Դրանք առայժմ չեն արտահանվում գործընկերներին և մրցակիցներին, ինչը լրացուցիչ պահպանում է այդ գաղափարների կենսունակությունը: Վերոհիշյալ գործոնները պետք է որ էական դերակատարում ունենան «Նոր աշխարհակարգի» ձևավորման ընթացքում:
- Ներկա անցումային վիճակը բնութագրվում է աշխարհաքաղաքական հստակ առանցքների և միությունների բացակայությամբ: Բազմաբևեռ համակարգի անցման պարագայում պետք է սպասել, որ, այնուամենայնիվ, տեղի կունենա դաշնակցային դաշտի ոչ լրիվ, սակայն որոշակի բյուրեղացում: Դրան է ձգտում ՉԺՀ-ն, որն ակտիվացնում է ՇՀԿ ձևաչափը Եվրասիայում և տեսականորեն փորձում է ձևավորել «Ասիական ՆԱՏՕ» ՀԱԱ-ում: Համարժեքորեն գնահատելով ռեսուրսների սահմանափակությունը՝ դրան է ձգտում նաև ԱՄՆ-ը, փորձելով

վերականգնել իր լիարժեք համագործակցությունը եվրոպական երկրների և ՆԱՏՕ-ի հետ[1]: Նման հնարավոր զարգացումները կարող են զգալիորեն բարդացնել այն ոչ մեծ տերությունների (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության) կացությունը, որոնք ներկայումս փորձում են, ելնելով իրենց ազգային շահերից, վարել համակողմանի քաղաքականություն:

- Քաղաքական գործընթացների անբարենպաստ միտումները կարող են դրդել ԱՄՆ-ին առաջատար դիրքերը պահպանելու համար դիմել կոշտ, ուժային գործողությունների, քանի դեռ մրցակիցները չեն հասել իրենց հզորացման այն անդառնալի կետին, որից հետո անցանկալի զարգացումները կասեցնելը դառնում է անհնար: Նկատենք, որ նման սցենարը տեղավորվում է «գերկանխարգելիչ» դոկտրինի սահմաններում [3, 21]:

Սեպտեմբեր, 2005

Աղբյուրներ և գրականություն

1. *Тер-Арутюнянц Г.,* «Холодная война–2 (с геоидеологической перспективой)», «Голос Армении», 05.12.2003, *Տեր-Հարությունյան Գ.,* «Աշխարհաքաղաքականությունից դեպի աշխարհազաղափարախոսություն», «Հանրապետական», #3 (23), էջ 28, 2005:
2. *Тихонравов Ю.В.,* Геополитика, М., ИНФРА-М, 2000.
3. *Հարությունյան Գ.,* ԱՄՆ ռազմավարության որոշ դրույթներ Իրաքյան հիմնախնդրի համատեքստում, «21-րդ Դար», #3 (5), էջ 105, 2004:
4. *Киссинджер Г.,* Уроки для стратегии ухода США из Ирака , «The Washington Post», 12.05.2005 (ИноСМИ.Ru).
5. *Куликова Н.В.*, «Моделирование идеологий как инструмент геополитического управления», Труды Первой Всероссийской конференции «Геополитическое будущее России», с. 151, М., 2003.
6. *Гриняев С.*, Поле битвы-киберпространство, Минск, Харвест, 2004.
7. *Хереш Э.,* Купленная революция. Тайное дело Парвуса*, М. , Олма-Пресс, 2004.*
8. *Валлерстайн И.,* После либерализма, М., УРСС, 2003.
9. *Храбрый О.,* Американский ревизор, «Эксперт», # 14, с. 86, 2005.
10. *Тодд Э.*, После империи, М., Международные отношения, 2004.
11. *Чернов М.,* Латиноамериканцы бросают вызов США, RBC daily, 09.03. 2005; *Зыгарь М.*, Объединенные американские эмираты, «Власть», # 19, с. 50, 2005.

[1] *Владимир Иванов,* Пентагон вырабатывает матрицу угроз, НВО, 03.06.2005; http://nvo.ng.ru/wars/2005-06-03/2_pentagon.html, *Владимир Ванин,* Удобное прикрытие для Пентагона, НВО, 16.09.2005; http://www.ng.ru/printed/nvo/2005-09-16/9_prikrytie.html

12. *Кеннеди Р.,* У США останется меньше друзей и появится больше врагов, «Международная жизнь», # 7-8, с. 129, 2005; *Грейм Х.,* Причины и последствия стратегического поражения в Афганистане и Ираке, Исследовательский центр конфликтологии, г. Сандхерст, 2004.
13. Китайская военная стратегия, М., Изд-во «Астрель», 2002, с. 118.
14. *Հարությունյան Գ.,* ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» ԳԿՀ, էջ 10, Երևան, 2003; *Авраменко А., Старунский А.,* Психологические операции НОАК, Зарубежное военное обозрение, # 4, с. 14, 2005.
15. *Малявин В.В.,* Китайская цивилизация, М., Изд-во «Астрель», 2003.
16. Китай: угрозы, риски, вызовы развития, Под. ред. В.Михеева, Московский центр Карнеги, 2005 (электронная версия: http://www.carnegie.ru/ru/pubs./books)
17. *Девятов А., Мартиросян М.,* Китайский прорыв и уроки для России, с. 187, М., «Вече», 2002.
18. *Киссинджер Г.*, «Нужна ли Америке внешняя политика: к дипломатии для XXI века», М., Ладомир, 2002.
19. *Тер-Арутюнянц Г.*, Алеет Восток?, «Византийское наследство», # 6, с. 23, 2005; см. также http://www.noravank.am/?l=2&d=19&f=149
20. *Арзуманян Р.,* Нелинейная природа войны, «21-й Век», # 1, с. 109, 2005.
21. *Иванов Вл., Плутарев И.,* Вашингтон всех достанет, НВО, 20.09.2005, http://nvo.ng.ru./printed/forces/2005-09-16/3_washington.html

ПЕРЕХОДНОЕ СОСТОЯНИЕ

Гагик АРУТЮНЯН

Резюме

В отношениях между бесспорным военно-политическим лидером - Соединенными Штатами и остальными, противодействующими их унилатеральной стратегии, геополитическими акторами установилось некое динамическое равновесие. Это позволяет характеризировать нынешний период как переходный, по ходу которого существенно затруднены попытки даже краткосрочного прогнозирования. Наряду с этим анализ политики США указывает на доминирование геоидеологического вектора по сравнению с геополитическими и геоэкономическими подходами, что дополнительно затрудняет расчет дальнейших развитий. Подобная геоидеологическая направленность особенно четко проявляется при реализации проекта «цветных ре-

волюций». Эта «революционизированная» геополитика напоминает по содержанию то, что происходило в свое время в СССР в рамках «доктрины Брежнева», а еше ранее - эпоху реализации коминтерновских технологий по экспорту перманентных революций. Однако в США, как и в свое время в СССР, происходит формализация и огосударствление идеологических установок и, согласно И.Валлерстайну, распад геокультурной системы в целом. Подобная аналогия, вкупе с итогами «цветных революций» в постсоветском пространстве и ростом антиамериканизма в мире, указывает на кризисные тенденции в глобальной политике США.

Полагают, что возможным конкурентом американской сверхимперии сегодня является Китай. Динамика развития этой страны стремительна, и, что суть важно, алгоритм китайских иделогических установок выглядит пока более гибкым и жизнеспособным. Формирование стратегического партнерства Китая с Россией в рамках Шанхайской организации содружества, совместное декларирование альтернативных принципов ведения глобальной политики являются заявкой на формирование миропорядка, в котором будут присутствовать по крайней мере два полюса силы. Вместе с тем похоже, что подобная система не будет повторять «черно-белый» двухполюсный мир времен холодной войны. Скорее всего, в ней будут представлены различные векторы идейного, политического и экономического характера. Но, тем не менее, подобное мироустройство будет подразумевать более поляризованную систему межгосударственных отношений. Вместе с тем нынешнее переходное состояние вкупе с общей идеологизированностью политической атмосферы повышает вероятность нелинейных развитий в виде глобальных военных действий. Возможность такого сценария, в частности, укладывается в рамки гиперпревентивной доктрины США.